ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ուրցաձոր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ուրցաձոր,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2014թվականի N 39

ՈՒՐՑԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման մասին օրենքի 16 –րդ հոդվածի 18-րդ կետով.ավագանին հաստատեց

ՈՐՈՇՈՒՄ 39_Ն

Հաստատել Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզի Ուրցաձոր համայնքում 2014 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը :

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքեր, շինություններ ներառյալ ոչ հիմնական շինարարության /տեղացման համար/ տեղական տուրք սահմանել հիմնական օբյեկտների համար `

1/ Մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 դրամ,անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար սահմանել 10000 դրամ :

2/ սույն կետի <<1>>ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

2.1/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000դրամ :

2.2/ 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000դրամ:

2.3/ 1001 - և ավելի քմ. մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3/ Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դրամ :

4/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերս ունեցող օբյեկտների համար 2500 դրամ :

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների ,քաղաքաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման,վերականգման, արդիականացման

աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացած կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն 1500 դրամ:

2/. Բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման,վերականգման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների ,վերակառույցների գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացած կամ շենքի գործառնական նշանակության,ապա բացի սույն կետի 1/-ին

ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերն օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ ծենքի գործառնական նշանակության փոփոխության մասով:

3/. նախատեսվում է միայն կցակառույցների ,վերակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի իմաստով այն համրվում է նոր ծինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր ծինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանվախ նորմերով:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 դրամ:

1-ին ,2-րդ,3-րդ կետերում սահմանվել է 0.5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ;

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ :

5. Համայնքի տարածքում

1/բացօթյա առևտուր կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր քմ-ի համար 350 դրամ:

2/ հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար սահմանել 150000 / մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

3/Խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկն երի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000/երեսուն հազար/դրամ:

6.Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/ սաունաները/ խաղատների ժամը 24:00ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/Առևտրի օբյեկտների համար 35 000 դրամ :

2/ Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 60000 դրամ:

3/Բաղնիքների/սաունաների/համար՝ 220000 դրամ:

4/Խաղատներ կազմակերպման համար՝ 600000 դրամ:

5./Շահումով խաղերի կազմակերպման համար՝ 350000 դրամ:

6/ Վիճակախաղերի կազմակերպման համար՝120000 դրամ:

7.Յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար 1 քմ.տեղական տուրք սահմանել.

1/Ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս/ արտադրանքի՝ 2000 դրամ:

2/ Թույլ ալկոհոլային/սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ 3500 դրամ:

3/Այլ արտաքին գովազդի համար՝500 դրամ:

4/Դատարկ գովազդային վահանակների համար՝700 դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3000 դրամ:

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու/ բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

Տեղական վճարներ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխելու,վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանները մշակելու և հաստատելու, ավարտված շինարարություն փաստագրելու համար,ՏԻՄ-ի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ:

2.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, ՏԻՄ-ի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ :

3.Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար կազմված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝

1/ աճուրդի դեպքում 5000 դրամ:

2/վարձակալության մարցույթի դեպքում՝ 5000 դրամ:

4.Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել՝

1/.Կենցաղային աղբի համար՝ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 100 դրամ:

2/ Ընտանիքում երեք և ավելի բնակչի դեպքում աղբահանության վճար սահմանել 300 դրամ:

3) Իրավաբանական անձանց համար սահմանել ամսական 2000 դրամ:

4) Աղբահանության վճարի արտոնություն տալ 4 և ավել անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին 100%-ի չափով:

5)Համայնքի տարածքում աղբահանությունը իրականացնել շաբաթը մեկ անգամ:

6/ Աղբահանության վճարի արտոնություն տալ զինծառայողների ընտանիքներին՝ աղբահանության վճար սահմանելով 50%-ի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍԱՆ ԽԱՉԻԿ

2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԴԱՎԻԹ

5. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ